# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N2

**ՀՀՏԿԵՆ ջրային կոմիտեի «Ջրառ» ՓԲԸ-ի կարիքների համար ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ՀՄԱՇՁԲ-20/3 ծածկագրով հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից գնման ընթացակարգով Արմավիրի մայր ջրանցքի մաքրման աշխատանքների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի**

ք. Երևան 11 փետրվարի 2020թ.
ժամը. 10:30

***Մասնակցում էին.***

Հանձնաժողովի նախագահ՝ **Մ. Առաքելյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱՊ Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ, գնահատման հանձնաժողովի ղեկավար)

Անդամներ՝ **Ս. Մելքոնյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱ Գնման Պատասխանատու/ Գնահատման Աշխատակազմ)

**Գ. Խոսրովյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱ Գնման Պատասխանատու/ Գնահատման Աշխատակազմ)

**Ա. Գևորգյան** (համակարգում՝ ԳՊ/ԲԱ Գնման Պատասխանատու/ Բացման Աշխատակազմ)

**Ն. Համբարձումյան** (համակարգում՝ ԳՊ/ԲԱ Գնման Պատասխանատու/ Բացման Աշխատակազմ)

Հանձնաժողովի քարտուղար **Կ. Բարսեղյան** (համակարգում՝ ԳՊ/ՄՀՄ՝ Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող )

## 1. Հայտերի բացման և գնատման մասին

---

(Մ. Առաքելյան)

ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ՀՄԱՇՁԲ-20/3 ծածկագրով հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից գնման ընթացակարգով Արմավիրի մայր ջրանցքի մաքրման աշխատանքների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ ք. Երևան Վարդանանց փակուղի 8ա, 6-րդ հարկ հասցեում, 2020 թվականի փետրվարի 11-ին, ժամը 10:30-ին:

Գնումն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն:

Գնահատող հանձնաժողովի նախագահը հայտարարեց նիստը բացված և հրապարակեց Արմավիրի մայր ջրանցքի մաքրման աշխատանքների գնման հայտով նախատեսված նախահաշվային գինը մեկ թվով արտահայտված՝

| Հ/հ | Գնման առարկայի անվանումը | Նախահաշվային գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1 | 1-ջրանցքների մաքրման աշխատանքներ | 811000 (ութ հարյուր տասնմեկ հազար) |
| 2 | 2- ջրանցքների մաքրման աշխատանքներ | 4999700 (չորս միլիոն ինը հարյուր իննսունինը հազար յոթ հարյուր) |
| 3 | 3- ջրանցքների մաքրման աշխատանքներ | 4000000 (չորս միլիոն) |

Հայտերի բացումն իրականացվել է www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով հրավերով սահմանված կարգով:

**1.1.Հայտ ներկայացրած մասնակիցների անվանումը**

«ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ՀՄԱՇՁԲ-20/3» ծածկագրով հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից գնման ընթացակարգին www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցը՝

| Հ/Հ | Մասնակիցների անվանումը |
|---|---|
| 1 | «Արհովշին» ՍՊԸ |

**1.2 Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին:**

Մասնակիցը www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով ներկայացրել է հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

**1.3 Տվյալներ մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին:**

«Արհովշին» ՍՊ ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերը կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

**1.4 Մասնակիցների առաջարկած գինը**

(ՀՀ դրամ)

| Հ/Հ | Մասնակիցների անունները | Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) | Ընդհանուր գին, ներառյալ ԱԱՀ |
|---|---|---|---|
| Չափաբաժին 2 – 2- ջրանցքների մաքրման աշխատանքներ | | | |
| 1 | «Արհովշին» ՍՊԸ | 23581950 (քսաներեք միլիոն հինգ հարյուր ութսունմեկ հազար ինը հարյուր հիսուն) | 28298340 (քսանութ միլիոն երկու հարյուր իննսունութ հազար երեք հարյուր քառասուն) |

**1.5 Հայտերի գնահատման մասին:**

Գնահատող հանձնաժողովն ուսումնասիրեց մասնակցի փաստաթղթերը: Ուսումնասիրության արդյունքում «Արհովշին» ՍՊ ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերում անհամապատասխանություններ չեն հայտնաբերվել: Մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ընդգրկված չէ գնումների գործընթացին իրավունք չունեցող մասնակիցների ցանկում:

Գնահատող հանձնաժողով որոշեց՝ «Արհովշին» ՍՊ ընկերության հայտը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

**1.6 Բանակցությունների վարման մասին:**

Քանի որ մասնակցի առաջարկած գինը գերազանցում է տվյալ գնման համար նախատեսված ֆինանսական միջոցները, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը և «ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով հրավերի 8.7 կետը գնահատող հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել և մասնակիցներին հրավիրել բանակցությունների:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

**1.7 «ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ՀՄԱՇՁԲ-20/3» ծածկագրով հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից գնման ընթացակարգի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին:**

Գնման ընթացակարգի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

**2.Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա, ժամի և վայրի մասին**

---

(Մ Առաքելյան)

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստ հրավիրել մասնակիցներին բանակցությունների վարման մասին ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից հաշված երկրորդ աշխատանքային օրվա ժամը 11:00-ին, ք. Երևան, Վարդանանց փակուղի 8ա 6-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Մ. Առաքելյան

Անդամներ՝ _____ Ա. Մելքոնյան

_____ Գ. Խոսրովյան

_____ Ա. Գևորգյան

_____ Ն. Համբարձումյան

Հանձնաժողովի քարտուղար _____ Կ. Բարսեղյան